

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-Պ ՏԱՐԻ

1886 ՅՈՒԼԻՍ 26

ԹԻԻ 3832

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 26 ՅՈՒԼԻՍ



ԱՆՆԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

ՄԱՍՆ Բ.

ՄՈՌԱՑՈՒՄ

(Շար. նախորդ Թուէն)

Փանի մօր վերջը բէօշին նոր տէրերը փոխադրուեցան : Տիգրան դեռ չէր տեսած զանոնք եւ զիչեր մը ճաշէն վերջը՝ ծովուն վրայ նայող սրահին մէջ բուսաբանութեան դիրք մը կը թղթատէր որ Հարաւային-Ամերիկայի ճոխ ու հարուստ բուսոց ու ծառոց վրայ կը խօսէր, երբ իր ծեր սպասաւորը նոր դրացիներուն այցելութեան եկած լինիլն իմացուց : Տիգրան դիմաւորեց զանոնք :

Արամ էֆէնտին, իր տիկինը, երկու փոքրիկ հրեշտակներ, ասոնք եղան Տիգրանի դիմաւորած անձինքն :

Ուսկից, ի՞նչ կերպով եւ ի՞նչ դիպուածով Պէօշիւքտէրէ ու իրեն այնքան մօտ եկեր էին : Ամենամեծ յուզմանց մէջ անգամ երիտասարդն ինքիւն տէրն էր . իր վրդովումն երկար չի տեսց ու կատարեալ ազնուութեամբ իր հիւրերը մեծարեց :

Արամ էֆէնտի միշտ միեւնոյն գորովայն ու մտերմաւէր անձն էր . հօր մը խան-

դադատանօք Տիգրանը տեսնելուն ու այնքան մօտ դրացի ունենալուն ուրախութիւնն յայտնեց : Բայց ի՞նչ փոփոխութիւն իրեն վրայ . երկու տարուան մէջ բոլորովին ծերացեր ու ինկեր էին . մազերը ճերմկեցեր, ճակատը խորշմեր ու տեսութիւնն եւ լոռ . զութիւնը տկարացեր էին . միայն անոր հըզօր միտքը մնացեր թերեւս առաջունէ աւելի զօրաւոր : Պաշտօնէ հաներ էին զինքը . նախանձարեկ հայ սպաշտօնեայնէր՝ իրեն մեծ դիրքին հետամուտ՝ չէին վարաներ մուր քսելու անոր մաքուր ու անբիծ պաշտօնավարութեան վրայ ու անխորհուրդ որոշում մը՝ առանց քննութեան՝ վտարեր էր զայն քաղաքական ասպարէզէն :

Արամ էֆէնտի պաշտօնի համար հոգի տուող մարդ չէր բնաւ . առանց բողբոջու, առանց գանգատելու, սակայն իր անմեղութիւնն անվիճելի կերպիւ հաստատելէ վերջը, զրեթէ զոհութեամբ ձգեր էր իր սպաշտօնն որոյ համար իր տկարութիւնն ու հիւանդոտ վիճակն արդեւ էին : Նախարարաց խորհուրդը չուտով համազուեր էր անոր անմեղութեանն եւ յարմար հանգըստեան թոշակով մը վարձատրեր էր այս խեղացի սպաշտօնէին քսան տարուան ծառայութիւնը, մինչդեռ Փարիզի մէջ գտնուող մեծ անուն հայազգի հարուստ մը, վաղեմի բարեկամ մը՝ որուն կը վերաբերէր այս բէօշն, անոր տրամադրութեան ներքեւ դրած էր զայն :

Արամ էֆէնտի անկեղծ հոգածութեամբ Տիգրանի վիճակն հարցուց ու իր երկու փոքրիկ զաւակները ներկայացուց որոնց մեծը զրեթէ եօթը տարեկան կայտառ ու զուարթ մանչ մը եւ միւսը չորս տարեկան փափուկ ու գեղանի մանկուհի

մ'էր : Սուրբիկ միայն անփոփոխ մնացած էր . ոչ սակայն . ծանրութեան հով մը կար անոր վրայ . բայց իր հրաշալի գեղեցիկութիւնն աւրուած չ'էր . այն երեւակայական կիներն էր միշտ պոր երիտասարդն իր ցնորքներուն եւ երազներուն մէջ կը տեսնէր ու կը պաշտէր . բուրում մը կար անոր վրայ կարծես հրապոյրի , հեշտութեան ու երջանկութեան որ իր շուրջը կը ծաւալուէր . Սուրբիկի գտնուած տեղն հմայիչ ու անբացատրելի մթնոլորտ մ'էր եւ անոր մօտն , այնքան մօտն ապրելու ստուգութիւնը Տիգրանն յիմարեցնելու չափ անհաւատալի երջանկութիւն մ'էր :

Սակայն Տիգրանի այս տալանորութիւնն՝ այն վրդովեալ յուզումը չ'էր որ գինքն ալեկոծեր էր այս կիներն առաջին անգամ տեսնելուն : Այս անգամ գոհունակութեան , անզորութեան ոգի մ'էր որ իր մտածութեան մէջ կ'արթննար : Վտանգալից ապագայ մը չի տեսաւ որ գինքը վախճնէր , այլ հեղ ու հանդարտ տեսութեան մը վայելքն որ իրեն պիտի բաւէր : Այս գիտուն , ծերունի ու բարի ամուսինն , այս նորատի ու գեղանի կիներն , այս երկու պաշտելի հրեշտակներն , այս ամէն ինչ ընտանեկան կենաց դրախտն էր անշուշտ եւ ինքն , այո՛ , ինչո՞ւ չ'ըլլար , մտերիմ , անձնուէր ու առաքինի բարեկամ մը պիտի լինէր հոն . որդւոյ մը պէս կը սիրէր ու կը յարգէր այս ընտանեաց տէրն ու եղբոր մը պէս , միայն եղբոր մը պէս , պիտի սիրէր անոր կիներն : Այն ատեն երեւակայեց իր կեանքը՝ ցայնսմամբ դառնութեամբ լցուած՝ որ յանկարծ երանութեան հորիզոններով կը վերաբացուէր :

Վտանգութիւն եւ ապահովութիւն զգաց իր անձին իրայ ու այս տրամադրութեամբ իր մտերմութիւնն ու գորովը կրցաւ ցոյց տալ այն ընտանեաց ուրիշ միջեւ այն օր խուսափած էր . անոր զաւակներն անհուն համակրութեամբ ընդունեց եւ փոքրիկ մանուկներն իրենց նոր բարեկամին կապուեցան այն անսխալ համոզմամբ որով տղայք անմիջապէս կ'որոշեն զիրենք սիրողն ու չը սիրողն :

Այսպէսով Տիգրանին կեանքը պատող մառախուղը փարատեցաւ եւ զուարթութեան արեւը նորէն վայելեցաւ անոր խըն-

դուն երեսին վրայ : Երիտասարդն ի բնէ ուրախութիւնը սիրող էր . երջանկութեան հեռանկարն իր սիրտն անսահման բերկրութեամբ լեցուց . բանի մը վաւերացող չ'էր այլ եւս ու գուցէ աշխարհիս վրայ միակ դո՛հ ու երջանիկ անձն էր : Հաւատքն ու համոզումն՝ աշխատութեան կարօտ չ'են գոյանալու համար : Տիգրան զգաց քան թէ որոշեց այս բոլոր խորհուրդներն . ապագային տեսարանը մանրերկրորդի մը մէջ պարզեցաւ իր աչքին առջեւ իր բոլոր պայծառ գոյներովն ու իր ամբողջութեամբ եւ Տիգրան աներկմիտ ու անկասկած հաւատաց անոր :

Ի՞նչ է արդեօք մարդկային սրտին գաղտնիքը . ժամերով , շաբաթներով , ամիսներով քննած ու անթափանց համարած ստուերները մէկ վայրկեանի մէջ անհետացան ու Տիգրան զարմացաւ որ այս գեղանկար երկինքը չ'էր նշմարած մինչեւ այն ժամը :

Առջի տեսութենէն՝ մտերմութիւնը կատարեալ եղաւ ու խօսակցութիւնը՝ զոր Տիգրան այնքան քաջ գիտէր անոր թելի դարձնել , մինչեւ գիշերուան վեց երկարեցաւ . բաժնուեցան ամէն օր տեսնուելու խոստմամբ :

Տիգրան մինակ մնաց . ի՞նչ զարմանալի ու անակնկալ դիպում . — ո՛ւսկից ո՛ւր ճակատագիրն առաջնորդէր էր այս կիներ՝ զոր չի տեսնելու համար ամէն ինչ ի գործ դրեր էր . բայց նախախնամութեան կամքն իր կամքէն վեր էր հարկաւ : Երկու տարուան մօտ ժամանակ մ'անցունելը մեծապէս օգտած էր իր տենդայոյզ տաքնապաց ամօքուելուն :

Տիգրան ինքզինքը ըննեց ու առանց վարանման յայտարարեց թէ բժշկուած էր անդարմանելի կարծած հիւանդութենէ մը : Սուրբիկի տեսքը նոր կեանք ու կենդանութիւն տուեր էր անոր . նոր մարդ մ'էր որ աշխարհ կուգար առողջ ու ազատ , առանց նախորդ ին տկարութեանց :

Ուստի անվախ ու անքայք պիտի ապրէր այն կնոջ մօտ եւ յիմարական տենդեր չի պիտի կրնային գալ վրդովելու իր անդորրէնութիւնը :

Այս երախաւորութեամբ հաստատուեցաւ այն սերտ բարեկամութիւնն որ երկու դրացիները գրեթէ միացուց :

Այս ընտանեկան սկսաւ բարեբաւ-
տիկ գոյներով։ Արամ է՛ր ինտիմ, բիշ մը հի-
ւանդատ ու տկար, մեծ բարեբաւ մը գը-
տած էր այս օղակաւորութեամբ։ Իր կիներ
միշտ ամուսնոյն մօտ, անոր բոլոր հանգըս-
տութեան եւ իր օրդւոց կրթութեան նը-
ուիրուած, ու Տիգրան որ զուարթ ու խըն-
դումբեւ այս առանձնատէր ընտանեաց ու-
գեւորութիւն կուտար ու անոնց միօրինակ
կենցաղավարութեան տրամութիւնն ու
ձանձրոյթը կը փարատէր։

Օրական զբաղումներն գրեթէ միեւնոյնն
էր. առաւօտուն կանուխ, գրեթէ արշաւոյ-
սին հետ կ'ենէին։ Երբեմն Տիգրան էր որ
այգուն այգուն քէօշիին դուռը ձեռք կ'առ-
նար ու երբեմն իր դրացիներն՝ որ երիտա-
սարդը կուգային արթնցնել ու անոր ծու-
լութիւնը մեղադրել, նախաճաշի ու ճաշի
տեղերն որոշուած էին անպատճառ առջի ի-
րիկուընէ։ Մերթ անտառուտ ու ստուերա-
մած մէկ կողմն էր իրենց պարտիզին մէջ
ուսկից կը դիտէին արեւուն ծագումն հան-
դարտ Աստիորի ջրերուն վրայ, մերթ Պէյ-
քօզի մէկ եզերքն ամայի ու անխուզ ծառի
թփի մը տակ։ Գերեզման մը, ճաշէն վերջն ըն-
թերցանութիւն մը կ'ընէին նոր հեղինակի
մը ու յետոյ ջուրերը կ'երթային, մասնա-
ւորապէս Քէսիմանէ-Սուլին որ խորհրդաւոր
ու նախապաշտօնէր անտառի մը մէջ պայծառ
ու անոյշ ջրի աղբւր մ'է ու Յէնի-Մահալ-
լէցի բնակչաց մի զբօսավայրը։ Գիշերն եր-
բեմն Պէյքիւք-Տէրէի գեղեցիկ քարափին
վրայ շրջագայութիւն մը կամ ծովուն վրայ
կոնտուրով պլոտիկ պոյոյտ մը եւ երբեմն
ծովեզերեայ տան սրահին մէջ խօսակցու-
թիւն մը պատուհանին քով լուսնի լուսով։
ահա այս անձանց հաճոյքն ու անցուցած
կեանքն։

Ոչ իսկ բառ մը, խօսք մը կամ ակնար-
կութիւն մ'անցելոյն այս ներդաշնակ երա-
նութեան մէջ։ Տիգրան ամէն բան մոռցած
էր։ Սուրբիկի հետ իր գործը՝ եղբայրական
անկեղծութեամբ ու համարձակութեամբ մը
կը յայտնուէր եւ նորաւոր կիներ միեւնոյն
անկեղծութեամբ ու համակրութեամբ կը
տեսնուէր իրեն հետ։

Մտերմութիւնն այնչափ յառաջ գնաց
որ օր մը Սուրբիկ Տիգրանի անցեալ օրերը
ընենէլ ուզէր։

— Ոչ որ չ'են սիրած միջեւ այս տա-
րիքը, Տիգրան, հարցուց անոր։ Զի պէս
անհանդարտ մէկը չ'եմ կրնար եւ թագրել
որ անտարբեր կամ անփոյթ մնացած լինի
միջեւ հիմա, աւելցուց խնդալով։ Նեղա-
նաս կամ չի նեղանաս հոգս չ'է, տեսնենք
պատմէ՛ մեզի քու յաջողութիւններդ ու սի-
րային արկածներդ։

— Ի՞նչ կը հասկնաս սիրային արկածը-
սելով։ Թէ որ այն խաբէրայ զրախօսու-
թիւնները կ'ըմբռնես զորս երիտասարդ մը
ու երիտասարդուհի մը առանց զիրար սի-
րելու անամօթ յանդգնութեամբ մը իրարու
կը կրկնեն։ Թէ որ այդ տեսակ պատմու-
թիւններ կ'ուզես, Տիգրան, ի՞նչ մեղքս պա-
հեմ, շատ ունեցեր եմ միջեւ ցարդ։ Իսկ
թէ որ ճշմարիտ, խորին ու սրտի կապ մը
ըսել կ'ուզես, առիկա ունեցեր եմ ու չ'եմ
ունեցեր միանգամայն, պատասխանեց երի-
տասարդը ցած ձայնով՝ որուն մէջ Սուրբիկ
իր կանացի փափկութեամբ տրամութեան
ու դառնութեան շեշտ մը նմարել կարծեց
ու խօսակցութիւնն յառաջ չի տարաւ։

Տիգրան փոխադարձաբար կրնար հար-
ցնել թէ Սուրբիկ ալ այդ տեսակ սրտի
կապ մը ունեցած չ'էր։ Բայց եւ ոչ մտա-
բերեց զայս։ Այս անբոյթ երջանկութեան
մէջ մտրած երիտասարդին ակնարկն ու
յիշողութիւնը ներկայէն անդին չ'էին անց-
նէր։

Յիշաւի երջանիկ էր Տիգրան։

Յորմէհետէ ինքզինքը տէր կարծեւր էր
իր սրտին, պատճառ մը չ'էր գտած իր ան-
ձը մշտնջենական զրկման դատապարտե-
լու։ Բաւ էր որ անպատիւ խորհուրդ մը
չ'անցնէր իր մտքէն եւ ուրիշ արգելք չի
կար զուրկ մնալու այս կնոջ երեսէն որ ի-
րեն համար արեգակն էր փայլուն ու կեն-
սատու։ Անոր շնչած. օդը շնչել, անոր պը-
տըտած վայրերը տեսնել, անոր ձայնը լսել
հեշտալուր, կարենալ առանց ո՛ր եւ է ան-
պատուութեան ամէն ժամ տեսնել զայն,
խօսիլ անոր հետ, մէկ բառով պաշտել զայն
իրապէս երբ վերացական աշխարհի մը մէջ
անգամ այսչափ երանութեան չ'էր հաւա-
տար, Տիգրանի՝ ուրիշ պաշանջելու բան մը
չ'էր մնար։ Ինչպէս սակայն իր խանդա-
վառ սէրն եղբայրական գորովանաց փոխա-
կերպեր էր, ինչպէս կրցած էր գոհանալ

պարզ մտերմութեան մը վայելքով. այս կրնա՞նք ասքնադատելի ծանրութիւնն էր արդեօք, անոր լուրջ ու խոհուն վարքն էր որ գինքն յեղափոխեր էր, թէ ոչ այս տեսութիւն իսկ մեծագոյն շնորհն էր զոր՝ իր սիրոյն չափազանցութեան մէջ՝ երիտասարդը շատ եւ շատ իսկ դատած էր իրեն համար: Ինչ որ ալ ըլլար չի փնտց ծածկել իր համակրութիւնն որ արդէն իր ամէն խօսուածքին ու վարմունքին մէջ երեւան կ'երէր: Տարօրինակ ազդեցութիւն մ'էր այս կնոջ իշխանութիւնն երիտասարդին վրայ. երբ որ խօսէր իրեն, ներդաշնակ նուազ մ'էր որուն դադրելէն վերջն անգամ երիտասարդը դեռ կ'ունկնդրէր երբ որ նայէր իրեն. փայփայիչ ու զգուշացի ակնարկ մ'էր որ իւրեն կը հետեւէր ու գինքը կը չըջապատէր երկտրական հոսանքով մը:

Խոստովանեցաւ օր մը Սուրբիկին իր բոլոր տկարութիւնը. — «Ձեմ գիտեր, ըսաւ անոր, ի՞նչ հայտնութիւն ունիս վրադ, կ'ըզդամ որ քոյրս քեզ չափ չը պիտի սիրէի. անբացատրելի զգացում մ'է զոր ի զուր կը ջանամ հասկնալ. հօր մը չափ կը սիրեմ քու ամուսինդ. հաւատա՛ որ ուրախ եմ այնպիսի բարի ու սիրեցեալ անձի մը կենակիցն լինելուդ. թերեւս իրարու չի հանդիպէինք բնաւ թէ որ Արամ էֆէնտի բարեկամը չը լինէի ես:»

Այս անդորրութեան օրերու մէջ էր որ Արամ էֆէնտի գլխի ծանր հիւանդութենէ մը պառկեցաւ. Սուրբիկ անձնուէր հոգածութեամբ մը խնամեց իր ամուսինը, ըսան օր հարկ եղաւ անքուն անցունել անոր անկողնոյն մօտ. դեղերը տալ, զայն սփռել ու խնամել վարձկան ձեռքի գործ չ'էր եւ Սուրբիկ անձամբ իր պարտքը կատարեց. վտանգներն անցան բայց նախկին առողջութիւնը չի վերադարձաւ. հիւանդութիւնն յաղթուեցաւ մշտնջենական հետք մը թողլով սակայն հիւանդին վրայ զոր անկարելի եղաւ բուժել: Արամ էֆէնտի ականջի ծանրութիւն մ'ունէր, այս հիւանդութիւնն անոր լսողութիւնը խանգարեց. հիւանդն ոտքի վրայ ելաւ բոլորովին խուլցած, ծանր հարուած մ'եղաւ ասի ձերունի մարդուն, յաւիտեական գրկում մ'էր ամէն յարաբերութենէ: Անփարատելի տրտմութիւն մ'եկաւ իր վրայ եւ ի զուր ջանացին գինքն

սփռել. ամէն մարդ պարտաւորեցաւ զբոլոր խօսիլ իրեն հետ: Ամէն ձայնէ զուրկ ու կարօտ մնացող այս մարդը՝ չի կրցաւ անտարբեր քաջութեամբ մը դիմադրել այս ազդեցին. իւր անզրադ օրերուն բոլոր հաճոյքը խօսակցութիւնն էր զոր հարկ էր մէկ կողմ թողուլ. իր խլութեան պատճառաւ պարտաւոր էր մեկուսի մնալ այլ եւս իրրեւ խելագար յիմար մը. այլ եւս ընկերութեան մէջ չը պիտի կարենար մտնել ծիծաղելի չըլլալու համար. երաժշտութիւնն եւ իր կնոջ դաշնակին ձայնը՝ զոր այնչափ կը սիրէր, ալ իրեն համար չ'էին. Նամանաւանդ իր օրդւոց ձայնը չի լսելը գինքը խիստ վշտացուց:

«Ջաւակներուս ձայնէն կարօտ մնացի» պատասխանեց անոնց՝ որք գինքը մխիթարելու համար ամէն քանք կ'ընէին:

Իսկ Սուրբիկ ի՞նչ կը մտածէր այս անտկընկալ պատահարին առջեւ: Իր ամուսնոյն դժբաղդ կացութեան վրայ կատարեալ ու խորին ցաւակցութեամբ մը հանդերձ չի կրցաւ ակնարկ մը չի դարձնել նոյն իսկ իր գոյութեան վրայ. հազիւ ՁՏ տարեկան էր դեռ երբ իր ձերունի ամուսնոյն հիւանդ վիճակը՝ նոր տկարութեամբ ծանրանալով, ընտանեկան կեանքը բոլորովին կը վերջացնէր: Ապաքէն քանի տարիներէ ի վեր հիւանդոտ էրիկը դարմանելով անցուցած էր կենաց ու երիտասարդութեան լաւագոյն օրերն. այսուհետեւ այրի ու ձերացած կընոջ մը տխուր ու մուսլ ապագան վերապահուած էր իրեն:

Յանկարծ անցեալ օրերը պատկերացան իր աչքին առջեւ անողորմ ճշգրտութեամբ մը. ո՞ր էր այն ցնորական երջանկութիւնը զոր Սեդրաքին սիրոյն մէջ կը վայելէր երբեմն, ո՞ր էր այն հեշտութեան դրախտը զոր երիտասարդին ականջին կը խոստանար ու կը փախար: Ուխտադրութեւն ու խաբէրայ՝ քարուքանդ կործաներ ու փշրեր էր այն երանութեան յոյսերն զորս իր ձեռքն էր իրականութեան վերածել. չարագուշակ հրեշտակի մը պէս եւ մահ աւերում սփռեր էր իր շորս դին, եւ սեւ հոդերն յափշտակեր տարեր էին այն մէկ հատիկ սիրեցեալն որուն միայն խոստացած էր պատկանիլ:

Սուրբիկ չար հոգի մէկը չ'էր. ոչ ոք իր յանցանքին մեծութիւնը թերեւս իրեն չափ

կը ճանչնար . ոչ ոք ապաշխարելու ու ներողութեան արժանանալու հարկն իրեն չափ կը խոստովանէր : Ամուսնական կեանքին մէջ իր սրտտականութեանց անթերի գործադրութեամբն սիրտինը մը դանել որոշեր էր, յաւէտ իր սրտին մէջ պաշտելով իր միակ սիրելոյն յիշատակը :

Տարիքի ահագին տարբերութիւնն , որ ի սկզբանէ իր եւ ամուսնոյն մէջ կը գրտնուէր , զինքը զուրկ թողած էր երջանկութեան այն ամէն յայտերէն զոր երիտասարդուհին իրաւունք ունի պահանջելու : Հայրական խնամք ու հոգածութիւնը դաւեր էր շատ անգամ հոն՝ ուր հրդեհող եւ սպառնող հեշտութիւն մը գտնել կը յուսար : Քեքոյշ ու հազուադիւտ ծաղիկ մը պէս քերթոցի մը մէջ միայն պահուեր էր , մինչպէս այնքան պէտք ունէր ազատ օդին ու արեւին ճառագայթներուն . չէր կրնար գանգատիլ սակայն իր ամուսնոյն դէմ՝ որոյ բարի , առաքինի ու ներողամտ բնութիւնն ամէն մեծ արանաց արժանի կը կացուցանէր զինքը :

Անշուշտ գիտէր թէ որքան անդարմանելի սխալ մը գործած էր ամուսին ընտրելով իրեն այնպիսի մէկին՝ որ հօր մը տարիքն ունէր իրեն քով եւ իր աչքը սեւեռելով կը տեսնէր իրեն տարեկից մանկութեան ընկերուհիներն որոնց ամէն մէկը հիմա իրեն պէս երիտասարդ , առողջ ու զուարթ , ամուսնով մը երջանիկ եղեր էր . անշուշտ իր ձեռքն էր օգուտ քաղել այն բոլոր թոյլտուութենէն՝ զոր իր ամուսինը կատարեալ վստահութեամբ մը տուեր էր իրեն , չեղելու ու մոլորելու համար պատուոյ ու պարտականութեան ճամբէն . երիտասարդներ չէին պակասած ահանջն ի վար գայլիչ ու ապահով նկարագրեւում այն ուղին որ ինչ էր անյատակ անդունդներով : Սուրբիկ մերժած էր ցայն վայր եւ գոհ էր խոտորած չը լինելուն ուղղութեան ճամբէն . բայց ահա անոք ու միայնակ՝ դատապարտեալ ծերունւոյ մը հետ ինքն ալ դատապարտուում էր . անզգայ մը չէր սակայն երբ երիտասարդական արիւնն այնչափ ուժգին կը շարժէր իր սրտին մէջ . ծաղկահասակ ու զեղեցիկ՝ ինքն ալ միթէ չէր գիտեր սիրել : Երիտասարդ կիներ , առանց ո՛ր է փորձառութեան տէր լինելու , խորին գիտա-

կցութիւն մ'ունէր իւր տեսնուած անձանց տրամադրութեանց վրայ ու իր կնային բռնազգմամբ առաջին տեսութենէն ճանչցեր ու հասկցեր էր Տիգրանի համակրութիւնն , իսկ հիմա բոլորովին կը կարդար անոր սրտին խորն ուր խռովութեան հովեր կը փռչէին :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

(Շարունակելի)

ԳԱԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

ՃԱՆԻԿՈՒ ՀԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՒ ՆՈՐ ՄԱՐԴԱՐԵՐՈՒ ՀԻՆԵՐ

(Շար նախորդ թուէն եւ վերջ)

Շարաթ մը յետոյ՝ Ալաքիւրի յոյն գիւղէն յոյն աղջիկ մը կ'ըսէ որ իրեն ալ երեւցած է ճերմակներ հագած աղջիկ մը եւ ըսած է . « Ըսէ բարա Նիզովին եւ կոսովանագին որ ժողովուրդն աղէկ հովուեն , թէ ոչ ձեր դրացի հայոց սպաննացեալ պատուահասներն ձեր վրայ եւս պիտի հասնին . դուք յոյներդ ժամանակ մ'չ հայերէն յառաջէիք , բայց այժմ շատ յետոյ մնացած էք : Տէր Վահանի պէս մի՛ լինիք , հապա անոնց հետեւեցէք , որք այն աղջկանց մարգարէութեանց հետեւելով ապաշխարեցին եւ հիմա կատարեալ խաղաղութիւն կը վայելեն : Ողորմութիւն տուէք , շարաթ մը հսկում ըրէք : » Քանի մ'որ ետքը Ղազար անուն անձի մը ետեւէն կը հասնին չորս կրակէ ձիերու վրայ նստող ահաւոր անձինք , զոյն կը յանդիմանեն յանիրաւի իւր ձին ձեծելուն համար . « Դուք եւ ձեր անասուններն բոլորդ ալ Աստուծոյ էք , եւ անոր նուիրեալ էք . տեսիլքի մէջ ձեզն ըսուած խօսքերն լիովին կատարելու էք , թէ ոչ աշխարհ պիտի կործանի » :

Թէ այս և թէ առջի երեք աղջկանց մարգարէութիւններն յանձունա կ'ազդեն ռամիկ ժողովրդեան վրայ . ամէն ոք լալ կ'ըսկրար . եկեղեցիներն մինչեւ իրիկուն լեցուն են . ողբ եւ կոծ բոլոր գիւղերը կը բռնէ :

Ամէն կողմէ հարիւրաւորները ընծայներով
այն աղջկանց կը դիմեն եւ իրենց կուրծ-
քերն ծեծելով, լալով իրենք զիրենք գետնէ
գետին կը զարնեն։ Այս սաստիկ յազման
միջոցին, երբ Աւգուստ-քէօյ գիւղէն 23 տա-
րեկան հայուհի մը ձեռքը երկու հատ հաւ
առած յիշեալ մարգարէներուն կը դիմէր,
ճանքուն վրայ կը տեսնէ ճերմակ մարմնով
ծերունի մ'որ զինքը կը կոչէ։ Աղջկը մօտե-
նալով, կը տեսնէ զայն խաչերով շրջապա-
տեալ, գլուխը ռոկեղէն թագով, եւ ձեռքն
արծաթապատ աւետարան մը։ «Գնա, կ'ըսէ
աղջկան, երկու հարիւր յիսուն ծունկ ժամ
րիչ, եւ վաղը այս ժամուս հոս զիս գը-
տիր։» Աղջկը կ'երթայ եւ կը կատարէ հը-
րամանը։ Հետեւեալ օրը կ'երթայ կրգտնէ
զայն, անոր կ'ըսէ։ «Ես Քրիստոսն եմ,
մինչեւ հիմա սպասեցի մէկն արքայութիւն
չեկաւ։ Դ ժողովը մեղաւորներով լեցաւ եւ
տեղ չը մնաց։ Ասոր համար թէ եւ զաշ-
խարհ պիտի կործանէի, սակայն իմ սէրս
առ մարդիկ չը թողուց զիս այսպէս ընել։
Վերջին անգամ կ'ըսեմ, եւ եթէ դարձեալ
մօտիկ չ'ընէք, առանց դիմոյ պիտի կործա-
նեմ զաշխարհ։ Գնա ըսէ թող ապաշխա-
րեն, զոհեր թող ընեն, ծով պահէ թող բըռ-
նեն։ մըթաթարնքն կաշառք թող չ'ուտեն
եւ աղբաւորները չը կեղեքեն։ քահանայք սը-
խալ թող չը կարգան։ Տէր Վահանը կը
սիրեմ, թէ եւ հիմա ասոնք սուտ ու մուտ
բաներ են ըսելով շատերը կը գայ թակղեցնէ,
ետքը ան ալ կ'զգաստանայ։»

Նոյն օրը սոյն աղջկին եւս երթալով
խուռն ամրոխին առջեւ կը պատմէ իրողու-
թիւնն։ Ժողովուրդը միահամուռ յերկիր
կ'իյնայ, բոլորն մէկ բերան «Տէր ողորմեա»
կը կանչեն մինչեւ կէս գիշեր։ Յետոյ աղ-
ջիկներն ճերմակներ հագած կ'երեւին եւ
«Գացէք, հանգչեցէք» կ'ըսեն։ Կ'երթան։
Այս վերջին «հէլ» ընկերներէն մէկն իրեն
աղաչելով կը խնդրէ որ զինքն ալ տանի
հոն։ Նէ ալ Քրիստոսէ հրաման առնելու
կ'երթայ։ Քրիստոս ճերմակ ամբողջ չուլով
իշու մը վրայ հեծած կէս ճանքան կ'երեւի
իրեն, կ'ընդունի իրեն խնդիրը։ «230 տա-
կան ծունկ ժամ ըրէք եւ եկէք։ Հիմա մօ-
տակայ գիւղ մը աչքէ անցունել գացած էի,
շատ հաւնեցայ» կ'ըսէ։ Հետեւեալ օրը եր-
կուսն ալ կը ներկայանան։ Նա ալ առջի

հրամանները կրկնէ յետոյ կ'ըսէ։ «Գե-
ղացիներն շատ սխալ կը խաչակնքեն։ Իրր
նշան երրորդ ութեան երեք մատերը միացը-
նելու են եւ շատ սխալու է որպէս զի պա-
րապ չը մնայ միջօր, զի մի գուցէ առաւել
սատանայ մտնէ։ Ընէք այդ կապիտ յոյնե-
րուն որ շաբթով եկեղեցի չը մանեն, այդ
ի'նչ անկրթ ու թիւն է։ Իմ առջեւս տրե-
խով չ'եղնուիր, պէտք է լուացուիլ, մաք-
րուիլ եւ արնպէս գալ։ Իսլամներէն օրինակ
առէք եւ անոնց պէս Երկրագործութեամբ
պաշտեցէք զիս։ Հաւատարմութեւ զալի եղիք»։
Որպէս զի չը մոռնան, կրկնէ տալէ յետոյ
կ'ըսէ։ «Վաթ թիկներէն եւ բողբոսկաննե-
րէն զգուշացէք։ անոնք որ մեռն չ'ունին
եւ չ'են խաչակնքեր անոնց հետ մի' հա-
ղորդակցիք։ Իսկ մեղաւոր էք, չ'էք կրնար
պղծել իմ տաճարներս։ Գացէք, եկեղեց-
ւոյն դրան առջեւ դէպ ի արեւմուտք կե-
նալով ապաշխարեցէք, խոստովանեցէք,
հաղորդուեցէք եւ ապա եկեղեցին մտնելով
դէպ ի արեւելք աղօթեցէք։ Տէր Վահանին
ըսէք որ բոլոր միաւորներուն, մըթաթարնե-
րուն, գայմազամներուն, միւթէվէլիներուն
եւ փաշաներուն եւ նոյնինքն թագաւորին
եթիմական նամակ գրէ։ Թող գան բոլորն
ալ իմ ծառայիս Լուսաւորչին կիրակի օրը
ժողովին Ս. Գրիգորի եկեղեցւոյն տօն օ-
րին, հոն պիտի ցուցնեմ իմ զօրութիւնս,
եւ պիտի պատարագեմ եւ զուր սպասաւոր-
էք յնձ։»

Թող ընթերցողն երեւակայէ այլ եւս այդ
խեղճ շինականներուն յազմունքը, անկա-
րելի է նկարագրել։ օրերով հեռու տեղերէ
գեղացիք կ'սկսին ոտքերնին բապիկ, գլուխ-
նին բաց դիմել հոն յԱգ-Ալըճ։ Կը լսեն որ
Քրիստոս յաշխարհ պիտի իջնայ մեղաց թո-
ղութիւն, հիւանդաց անողորմութիւն եւ կու-
րաց տեսութիւն պիտի պարգեւէ եւ այլ եւ
այլ յաւելուածներով կը տարածուի։

Մարտի 30ը կը հասնի Լուսաւորչին
կիրակին։ Հինգ հազարէն աւելի անձինք կը
լեցուն Ագ-Ալըճի արտերն եւ պարտէզ-
ները։ Եղսա, Աղնիւ եւ վերջին երկու «հէ-
ներն շապիկներ հագնելով կ'երեւան։ Բոլոր
ժողովուրդը կը խանարհի դէպ յարեւմուտս։
Բարձր ձայնով լալ կ'սկսին։ «հաւա՞ր վայր-
կեան մը քահանայք աւետարաններով դուրս
կ'եննեն, դպիրք եւ տիրացուք մոմերով

խոսակերտով կ'երեւին ամէն կողմ: Այն մեծ բազմութիւնն կ'ենէ եւ ուղղակի կ'երթայ ուսանելիք տակը յորում երեւցած էր Քրիստոս երկու աղջկանց, իրենց չարքաններն կը հանեն երկիւղածութեամբ, արտը կը մըտնեն, խաչակնքելով եւ երկրպագելով իշուն կոխած տեղերէն հող կ'առնեն իրենց վերքերուն վրայ, երեսնուն եւ աչքերնուն կը քսեն, եւ չը կրցող եկողներուն ալ տանելու համար իրենց թաշկինակներն կը լեցնեն: Տան երկուքէն աւելի քահանայներ ժամերով զիրար կ'ոխրատող ժողովրդեան հաղորդութիւն կուտան, եւ աղջիկներն նշխար կը պատրաստեն: Անդին յոյն քահանայ մը՝ մինչ իրիկուն այագմօս կ'ընէ: Արեւելք եւ արեւմուտք կեցող հարիւրաւոր անձանց մէջ կը տեսնուին բողոքականներ եւ իսլամներ: Ասոնցմէ ետքը Քրիստոսի նստած տեղը ձերմակ սաւան մը կը ձգեն, որուն վրայ իրենց ժամուցները ձգելով հերիսան ուտելու կ'երթան: Երբ կը հարցուի մարգարէներուն թէ, որո՞ւ պիտի տրուէր այդ ըստակը, կը պատասխանեն թէ՝ քսան դահեկանը պիտի տրուի գուշակներուն կերած հացին համար եւ մնացեալը պիտի պահուի մինչեւ որ Յիսուս Քրիստոս հրամայէ ինչի գործածուել որ պէտք է: Ուստի ստակը կը ժողովեն եւ աղջիկներուն կուտան որ պահեն: Մէյմ'ալ կ'ըսուի թէ Տէր Վահան այս միջոյիս գալով չարքանով սուրբ տեղը կոխկըռտեց եւ սիկարա ծխելով դէպի ուսանելի կը փչէ, կը թքնէ եւ «Ասոնց ամենն ալ սուս են, ստուծիւն եւ խաբէքայութիւն են» կ'ըսէ:

Մարգարէութիւններէն մէկը կը վազէ եւ կը սլուայ. «Անհաւատ, ինչ կ'ընես, չե՞ս վախար Աստուծոյ բարկութենէն, հիմա պիտի իյնաս սատակիս»: Ժողովուրդը կը յարձակի խեղճ քահանային վրայ, բայց նաներկայ եղող թուրքաց շնորհիւ կը փախչի կատաղի եւ վայրագ ամբոխին մոլեգնութենէն: Հերիսան ուտելէն ետքը, քահանայք գուշակներուն հրամանաւ կ'սկսին եկեղեցական ժամերգութեան եւ այն օրը կը վերջանայ բաւական մեծ կակ հառոյթ մը թողլով: Ամբողջ հետեւեալ օրը ուսանին մի անգամ եւս այցելելէ յետոյ իրենց տեղերը կը ցրուին: Ամեն լողներն դարձեալ կը գիտեն ինչէ ալ գուշակներուն: Տէր Վա-

հան եւ ժողովրդէն մի քանի խոհուն անձինք՝ գործին երթալով չարանալը տեսնելով կը պարտաւորին Գուրչունլու երթալ եւ Գայմադամին տեղեկացնել: Գայմադամն եւս աղջիկները բերել տալով հարցաքննութեան կ'ենթարկէ: Խեղճ աւաններն լեղատառաւ կ'ըլլան եւ ինչ ընելիքնին չ'են գիտնար. շփոթած, խռոված իրարու երես կը նային: Գայմադամը կը բռնադատէ եւ վերջապէս կը խոստովանին թէ «առաջ ատանկ բաներ տեսած էին, բայց հիմա չեն տեսներ»:

Կը հարցուի — «Իրա՞ն է, ե՞րբ պիտի կործանի աշխարհ» — Կ'ըսեն «Ձեք գիտեր»: Գայմադամն աղէկ յանդիմանութիւն մը տալէ յետոյ, կը յանձնարարէ Տ. Վահանին որ, եթէ ապագային մէջ այդպիսի անհաճոյ յուզմունքներէ ժողովուրդն ազատել կ'ուզէ, աղջիկներն թող կարգէ: Խեղճ քահանայն կը խորհի եւ ուղիղ կը գտնէ: Ուստի զանոնք Ուլու-Բունար գեղը տանելով, երեքը կ'առնանացնէ, եւ մէկն առնող չը գտնուելուն համար հետը կը բերէ եւ իր տունը կը դնէ: Այլ եւս ո՛չ պատգամ կայ ո՛չ գուշակ, ո՛չ կործանում եւ ո՛չ ապաշխարութիւն:

Այս պատմութիւնն որ ըրինք, թէեւ առաջ լած էինք, բայց չէինք համարձակած տեղեկագրել. վերջերս ճանապարհորդութիւն մը ունենալով ո՛ր կողմերն, Գարու-Գայայի վրայով հոն՝ Ագ-Ալըճ գաւցինք եւ Տ. Վահանի հիւր ըլլալով թէ՛ իրմէ եւ թէ՛ ուրիշներէն լրացներս խիստ համառօտ կերպով կը գրենք: Խեղճ գուշակահին եւս տեսնեք, որ իր խենդ ու թիւններն պատմել թէեւ չը համարձակիր, բայց չը խօսիլ ալ չէր կրնար, ուստի իրեն ալ եղածին պէս ըսել տուինք: Մենք սոյն պատմութիւնը գրելով երկու նպատակ ունինք. նախ, Ձարչանալայի եւ Սամսոնի հայ գաղութներն եւ Գարու-Գայայի շինականաց տգիտութիւնն եւ խեղճութիւնը նկարագրել. երկրորդ՝ հայ հովիւներու կամ եկեղեցականներու աններելի անհոգութիւնն եւ իրենց պաշտօնին անհաւատարմութիւնն յայտնել եւ Պսլոյ կրօնականին աչքին առջին դնել թէ դաւառներն լքանելով իրենց թիւն ստուարացնելու համար Վաստիւր դիմող վեղարա-

ւորներն ի՛նչպիսի անձինք են : Ահա ապագայը . . . թէեւ պողին , ժամուցը անպակաս կ'առնեն , բայց իրենք զիրենք կ'արածեն . . . :

Այդ կողմերն , որ Զարչանպայի եւ Սամսոնի մէջտեղ կ'իյնան , լեռնական երկիր մ'է . անտառ խիստ քիչ եւ մշակելի հող եւս նուազ են , ուստի բազմութեամբ մէկտեղ չեն բնակիր : Զորի մը մէջ կը տեսնես 7-8 տուն , տաս րոպէ անդին 4 տուն , քիչ մը անդին 10 տուն , եւ այսպէս ցան եւ ցիր են , որոց օյուճաք անունն կը տրուի :

Փարու-Փայա եւս ասոնցմէ է , 25 օյուճաք ունի , սա տարբերութեամբ որ օյուճաքներն թէ՛ իրարու մօտ եւ թէ՛ մեծ են : Շատ աղքատ եւ խեղճ են , թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյ սկան : Շատ անասուն չ'ունին քանզի չեն կրնար ունենալ եւ անտառ եւ բիւլ ըլլալուն մեծ խնայողութեամբ կը դորձածեն : Այս խեղճութենէ ազատելու համար քանի մը տարիէ ի վեր շատերն Ռուսիա կը գաղթեն , յԱնգրիոյ վասիա , Անաբայի վրայով . հոն կատարութիւնն իրենց հողեր կուտայ՝ եւ ասկէ հանդիստ են եղեր . ամեն տարի կը գաղթեն եւ անցեալ տարի 15 տուն եւս գաղթած են , այս տարի ալ պատրաստուողներ կային : Հաս ըստհայ եւ եկեղեցի՝ չ'ունենալուն համար , բոլորն ալ բողոքականաց ժողովարանը կ'երթան եւ բնա տարբերութիւն չեն տեսներ անոց եւ իրենց մէջ : Ասոնցմէ երեքն թալլը-Փայա , Հէօպէք-Փայա եւ Ուլու-Բոււար (որք Փարու-Փայան կազմող 25 օյուճաքներէն են) բողոքական բողոքականացնալ են : Բողոքականք ունին երկու քար . զիչ , երեք ժողովարան , երկու դպրոց ալ ջրկանց եւ տղայոց եւ 50 աշակերտ : Միայն առաջին երկուքն 110 տան չափ քողովանաց կ'երթան :

Այդ գիւղերն կամ օյուճաքներն , որք ճանիկու ՄիւթէսարըՓութեան կը վերաբերին , 1400 տուն կը համարուին , թէ եւ աւելի են : Ար խօսին այնպիսի ապականեալ հայերէն մը որ ո՛չ աշխարհաբար է , ո՛չ գրաբար եւ ո՛չ տաճկերէն : Եթէ զուտ տաճկերէն խօսին , ան ալ չը հասկցուիր կամ շատ դժուար է հասկնալ . մանաւանդ երբ

չուտ չուտ խօսին , ինչ լեզու լինելն ալ չը հասկցուիր :

Ասոնք կրթելու եւ հայ ըլլալին իրենց գիտցնելով ապագայ կործանումէ մը պահելու համար որչափ որ գիտենք ո՛չ մի միջոց մեզ Կեդրոնն : Հայաստանի մէջ կրթական գործին համար տընող Միացեալ եւ Հայուհեաց Ընկերութիւններն հնար չէ՞ որ մի քիչ ուշադրութիւն դարձնեն հոս եւս , որ այնչափ կարօտ է :

Վ.ՏԱՐԱՆԻՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

ԼԱԶԱՐԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՆ Ի ՌՈՒՍԻԱ

ՎՐԻԺԱՌՈՒ ՀԱՅՈՒՆՆԵՐ

Ինչպէս իրողութիւնները հաստատում են , Ռուսիայի մայրաքաղաքում խիստ յաճախ են տեղի ունենում մենամարտութիւններ : Մենամարտութիւններ տեղի են ունենում զանազան դատաւարգի պատկանող մարդկանց մէջ , լինին դեռ պարզ ուսանողներ կամ գրագէտներ , զինուորականներ կամ այլ կարգի պաշտօնեաներ . բաւական է միայն որ որ եւ է մի ծագած խնդրի առթիւ անձի մը ինքնասիրութիւնը , պատիւը շօշափուի իւր հակառակորդէն : Մենք բազմաթիւ մենամարտութիւնների մէջ կը պատմենք այստեղ մի միայն մի մենամարտութեան մանրամասնութիւնները , որի շարժառիթն եղած է մի Հայուհի :

Անցեալ տարուայ սկիզբներում Պետերբուրգի առաջնակարգ բարձր չըմաններում ընդունուած մի ուսու զինուորական երիտասարդ՝ Պանիւտին մականուամբ , սիրահարվում է տեղւոյս ազնուական եւ հարուստ դասակարգին պատկանող մի ուսու օրիորդի վերայ : Դոցա յարաբերութիւնները , ծանօթութիւնները շարունակվում են մի քանի ամիսներ : Օրիորդն , որ բաւականին պատկառելի մի դուստրի օժիտ է ունենում , թէ եւ սկզբից հաւանականութիւն է ցոյց

տալիս ընդունիլ վայելչակազմ ուսու երիտասարդ սպայի սէրը, սակայն մի գեղեցիկ օր խիստ կտրողական կերպիւ երիտասարդին երես առ երես մերժում է նորա առաջարկած սէրը: Պանիւտին, անկարող գտնուելով տանել այս հարուածը, մի միջոց է փնտռում գէթ հեռանալ մայրաքաղաքէն իւր կրակոտ սէրը մոռնալու համար: Նա ուղեւորում է Կովկաս:

Անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ և ահա՛ հարաւային օդի տակ Պանիւտին նորէն սիրոյ քաղցը, բայց մի և նոյն ժամանակ և խիստ յուզիչ տենդի մէջ է տառապում, այլ այս անգամ մի Հայուհու ազդեցութեան տակ:

Նորէն երիտասարդին առաջ փոքր ինչ խոջնդոտներ են գալիս. ըստ որում Հայուհին հեշտութեամբ չէ կամենում իւր բաղդը կապել օտարի հետ. վերջապէս կայանում է համաձայնութիւն: Ռուս սպայի այժմեան սիրոյ առարկան, հանգուցեալ ժեներալ Հայկազն Լազրեվի, այդ բուն հայրենասիրի դուստրն է:

Նշանադրութիւնն տեղի ունենալէն զկնի անցնում է մի երկու օր, երբ Պանիւտին Պետերբուրգից ստանում է անսպասելի կերպիւ իւր նախկին սիրուհւոյ մի ցնցում ազդող նամակն, որով ուս օրիորդն յայտնում է թէ նա վճռել է իւրեան նուիրել Պանիւտինին, ուստի և խնդրում է նրանից խկոյն շտապել դէպ ի Պետերբուրգ:

Ռուս երիտասարդն այժմ երկու կրակի մէջ ինկած գոլով, խիստ դժուարանում է իւր այդ նեղ վիճակէն դուրս գալու, այն ինչ ամէն փոքր ի շատէ մի բարեկիրթ մարդ, որ անշուշտ դիտէ թէ ո՛ր աստիճան մեծ նշանակութիւն ունին մարդուս համար պատիւ, ինքնասիրութիւն ասած բաներն, անմիջապէս մերժողական պատասխան կը տար ստացած նամակին և այնպէս իւր բաղդը կը կապէր այն օրիորդի հետ, որը յօգուտ նրան մեծ, չափազանց մեծ զոհողութիւններ էր արել եւ զոհել օտարին իւր օջախի, ազգի ու եկեղեցու բարի համբաւն ու պատիւը: Սակայն ուս երիտասարդն աւելի փոքրոգի գտնուելով այդպէս չէ վարուել, այլ մի ինչ կերպ խորամանկութեամբ կարողացել է խաբել Օր. Լազրեվին, աւարկելով թէ մի ստիպողական գործի

պատճառաւ մի 15-20 օրով կանչուած է Պետերբուրգ, և այսպիսով փախուստ տալով Հայուհիէն, կայծակի արագութեամբ թռչում է մայրաքաղաք եւ խկոյն այնտեղ պսակվում ազնուականութեան պատկանող, մեծ օժիտ ունեցող իւր նախկին սիրուհու վերայ: Սակայն անցնում է մի քանի օր և գաղտնիքը յայտնվում է. Հայ օրիորդը մինչ այդ կէտը իւր գոյութիւնը մոռանալուն չափ իւր անձը զոհել էր օտարին, այժմ օտարի այդ անսպասելի տմարդ, ցած, ըստոր վարմունքն խմանալուն պէս, մի րոպէում որպէս մի գազան, վազը դարձած երգվում է արեան, սոսկ արեան գնով պատուի պահանջում անել իւր պատիւը հողի հետ հաւասարեցնողէն, հասարակութեան առաջ իւր անուան ու օջախի համբաւը խայտառակ անող օտարէն որ այնքան լիրբ համարձակութիւն էր ունեցել ծաղրել Հայ ազգիան:

Այս նպատակաւ Հայուհին դժուածի նըման սրնթաց դիմում է Պետերբուրգ, իւր աւագ եղբոր մօտ, որը նոյնպէս պսակված է օտարի, վրացուհու վրայ:

Մայրաքաղաքն հասնելուն պէս իւր եղբոր հետ խօսակցելով, Պանիւտինէն վրէժ առնելու միջոցներ է պահանջում: Երկարատեն խօսելով վիճելուց յետոյ, օրիորդը կարողանում է համոզեցնել որ իւր երեք եղբայրներէն մէկը մենամարտութեան հրաւիրէ ուս երիտասարդին. վիճակն ինկնում է միջին եղբորը. նորա բացակայութեան առթիւ խկոյն հեռագիր է քաշում Բագու շտապել «մի ինչ կենսական խնդրի առթիւ» Պետերբուրգ: Մի վեց, եօթ օրէն զկնի օրիորդի միջին եղբայրն արդէն մայրաքաղաքումն է: Այժմ առաջարկութիւն է տեղի ունենում Պանիւտինին մենամարտելու համար. ուս երիտասարդն հեզօրէն է պատասխանում Լազրեվի կողմից առած առաջարկութեանն: Վերջինս դիմելով խիստ միջոցների, ստիպում է վերջապէս Պանիւտինին ընդունիլ մենամարտութեան հրաւէրը:

Համաձայնութիւն գոյանալէն զկնի Օր. Լազրեվ ուղեւորվում է արտասահման:

Նշանակվում է մենամարտութեան օրը, ժամը, և հրաւիրվում են վկայները:

Պէտք է այստեղ ասել որ Ռուսիոյ մէջ

մենամարտութիւնն օրէնքով խիստ արգելուած է, սակայն մենամարտողները միշտ գտնուում են միջոցներ անտես առնել թէ՛ այդ օրէնքը և թէ՛ իրենց բարեկամների ուշադրութիւնն, որովհետեւ այս վերջիններն ամեն անգամ աշխատում են տեղի չտալ այս խիստ, բարբարոսական միջոցները տեղի ունենալու իւրեանց սիրելիների հետ:

Լազրեվի և Պանիւտինի մենամարտութիւնն խանգարելու մտօք փորձեր նոյնպէս եղան վերջինի կնոջ և ծնողների կողմէն. բայց և այնպէս, մենամարտողները, նոյս վիանքերը, բաւականին սխալ, մի միանց հակառակ լուրեր տարածելով մենամարտութեան կայանալու ժամանակի մասին, կարողացան յաջողացնել առանց արգելքի մենամարտութիւնն, որը տեղի ունեցաւ Պետերբուրգի արուարձաններէն միոյն մէջ առաւօտեան ժամի 5 ին, որ է լուսադէմին:

Առաջին կրակ բաց անողը լինում է առհասարակ հրաւէրը ընդունողը, որպէս այս անգամ մի և նոյն ճշգրութեամբ դործ դրեց Պանիւտինն. գնդակն ուղղած լինելով Լազրեվի ճակատին, մի ինչ բարեբաղդութեամբ նորա համար, անցել է ականջի տակով: Ուստի երկրորդ գնդակը արձակում է Լազրեվը: Լազրեվի ուժգին խիստ գնդակէն Պանիւտին մահացի վէրք է առնում փորէն և երկրորդ օրը կնքում է իւր մահկանացուն:

Թէև օրէնքով Լազրեվը մի տասն ամիս չափ պէտք է բանտարկուեր, սակայն մի բաց, յաջող պատգի տակ ծնած լինելով, որպէս հաստատում են նորա մօտ խմցողները, նա ազատ չրջում էր մի առ ժամանակ մայրաքաղաքում և անշուշտ Պետերբուրգի ամեն դասակարգ հասարակութեան օրուան հերոսն էր դարձած:

Հարկաւոր ենք գտնում այստեղ յիշել և այն, որպէս հաւաստիացնում էին, թէ, եթէ միջին Լազրեվը մահացի վէրք առնէր Պանիւտինի գնդակէն, այն ժամանակ հերթով մենամարտելու էին եւ մեծ ու փոքր Լազրեվ եղբայրք:

Այս մենամարտութիւնն մեծ յուզում պատճառեց մայրաքաղաքի հասարակութեանն, մանաւանդ երբ ռուս ազգեցիկ Նովո-Վրէժնի թերթը համարձակութիւն ու-

նեցաւ այդ մենամարտութեան մանրամասնութիւնները երեւան հանել: Այս մենամարտութիւնն, բայցի որ մեծ աղմուկ հանեց Պետերբուրգի բարձրագոյն ընտանիքների շրջանում, որին պատկանում էին Պանիւտին և իւր ամուսինն, այլ և խիստ յուզում պատճառեց նոյն խիստ արքունիքում:

Անտարակոյս մեզ, որպէս հայի, հետաքրքրում է խնդրի և մի այլ կողմը, այն է, որ մեծ հռչակ հանող հայկազն ժեներալ ազգասէր Լազրեվի որդիք և աղջիկ այնքան թուլամորթ և ցածահոգի են գտնվում, որ իւրեանց բաղդը կապելով օտարների հետ, այդպիսով միանգամայն անպատուում են թէ իւրեանց ազգասէր հօր աւանդը և թէ կորչում անհետանում են Հայութեան համար, որպէս անպէտք և գոյութիւն չունեցող անհատներ:

* * *

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՈՂԲ

Ի ՎԵՐԱՅՈՒՄԱՆՅՆ ԵՐԿՐԻ ՀԱՅԵՐՈՒՆ
Ի ԹՈՒԱԹՅԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱՆԱԳԻ ԱՍԱՑԵԱԼ

Այս վերնագրով 110 տուն է բաղկացեալ հետագայ տղոս, իրր ակնանատես պատմիչ, գրած է Եւդոկիացի Մինաս սարկաւագ առնուն ոմն, Ժ. Գ. դարուն մէջ. որոյ ինքնագիրն Ունգարիոյ հայաքաղաքին (Կեռլա կամ Արմէնօրօլի) Ս. Երրորդութեան եկեղեցւոյ բազմաթիւ դրեանց¹⁾ մէջէն գտնուելով, ընդօրինակեր է տեղւոյն առաջին վարժապետ եւ տիրացու Խաչատուր Հորմեանց, 1880 ին, եւ ի ճշգրութիւն ընդօրինակութեանն վաւերացուցեր է նոյն տեղի Ժողովրդապետ Գ. Տ. Ղուկաս Պարանեան:

Յետ որոյ, Վանեցի Սիմոն Երուանդեան

1) Ուղեւոր մը, Պ. Ա. Մ. Ալթունեան, կը պատմէ թէ Ս. Երրորդութեան մասնադարանին մէջի ձեռագիրներն ցիրուցան ըլլալէն յետոյ, դարձեալ «200 կտոր» ի մօտ կը գտնուէր այժմ բարեբախտաբար:

անուն ոմն այդ կողմերն ընդ երկար թափառելն զինի, Պատուելի Սաջատուրին ընդօրինակածն զխախտմամբ ձեռքն անցընելով, ինք եւս անկէ կ'ընդօրինակէ եւ Պոլիս վերադարձին ինձ կը յանձնէ զայն ազգասիրաբար՝ որպէս զի հրադարակ հանելով ծանօթացնեմ Ազգիս ի ցաւ եւ ի վիշտ:

Եւ ահա այսօր պատեհ տոթի՞ ռենկնաւով կը կատարեմ խոստումս՝ զարձեալ Հ. Ալիշանի անուան նուիրեալ, որպէս հրաապարկուած են նախօրոյդ (Ա. Բ. Գ.) յերէրադանո հանգիսի:

Գողեմ առ ձեզ ողբերական,
Հառաչանք յոյժ լալական,
Քահանայք եւ աշխարհական,
Ծուռի դրէք ամենեքեան:

Ի թուին Հայոց Ռամին,
Տասն եւ վեց էր օգոստոսին,
Աստուածածնի Փոխման օրին,
Ի տէրունաւոր կիրակէին:

Ի յայս վերջին ժամանակի,
Փորձանք եկաւ Հայոց ազգի,
Վասն մեղացն մեր յայտնի,
Զոր դործեցաք ի յաշխարհի:

Հիւսիսական կողմն աշխարհի,
Փորրիկ երկիր կայ Ռախի,
Բազում Հայ կայր իւրեանց միջի,
Լաւ քրիստոնեայ եւ անուանի:

Երիցանիքըն ուսածք էին,
Ժամատեղեօք պայծառ էին,
Խիստ փառաւոր Հայեր կային,
Յանկարծ փորձանք եկաւ նոցին:

Օլախ ազգին մեծ վոյվօտան,¹⁾
Անուամբ կոչէր ինքըն Շահ-Քան,
Մանուկ տիօք անբարտաւան,
Բազում Հարիք արար մարդկան:

Նա հաւատովն էր Հոռոմի,
Դաւանութեամբ Քաղկեդոնի,
Նոր Հար գործեաց Հայոց ազգի,
Որ ոչ բնաւ եղեւ յերկրի:

Զոր թաղաւորըն առաջին,

¹⁾ Իշխան, կառավարիչ:

Այսպէս Հարիք ոչ արարին,
Զոր դա գործեաց Հայոց ազգին,
Լուսաւորչի փորրիկ հօտին:

Աստուածածնին օրըն Փոխման,
(Վ.) Լախաց ազգիս չար վոյվօտան,
Իւր պարոնեայքըն միտքան,
Սըչով¹⁾ քաղքի բերդն մտան:

Նախկողապք իւրեանց ազգին,
Աւագ երէցք ի միասին,
Նստան ի հաց ի սեղանին,
Ուրախանալ ի միասին:

Խորհուրդ արին իւրեանց միջի,
Զարիք բազում սերմանեցին,
Շատուց ռիս կայր իւրեանց սրտին,
Սուրբ հաւատոյ Լուսաւորչին:

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

Բանկալթի, Իջ Մարգաց ՏՅՀԷ

(Շաբաթակէս)

Տ Ե Ղ Ա. Գ Ր Ա. Կ Ա. Ն

ՆԻՔՍԱՐ ԵՒ ՀԷՐԷԿ

Նիքսար՝ Սամսոնէն 27 ժամ, Անասիայէն 20 ժամ, Թօքաթէն 10, իսկ Շապին-Գարահիսարէ գրեթէ 35 ժամ հեռաւորութեամբ եւ ասոնց մէջ տեղը ձորի մը բերանը շինուած մի աննշան եւ խիստ քիչ բնակիչ ունեցող քաղաք մ'է: Շատերու՝ նոյն իսկ մօտակայ մեծ քաղաքաց բնակիչներու անձանթ է այս քաղաք, որ երբեմն Պոնտոսի պետութեան ժամանակ իբրեւ գլխաւոր քաղաք կը փայլի եղեր իւր բազմամարդութեամբ եւ ամրութեամբ: Այսպէս կը վկայեն պատմութիւնն եւ այն կիսակործան շինուածքներն որք կան ի վերայ բերդին եւ արտաքոյ բերդին: Քաղաքին մէջ տեղէն անցնող ձորին վրայ կան նաեւ Միհրդատի օրէն մնացած քանի մը

¹⁾ Սուլաւա, համանուն գետին քով հին քաղաք մ'է, որոյ շուրջն երկու հազար տարուան բերդի մը շնացորդն կը նշմարուի:

քարուկիր կամուրջներ, յորոց մի երկուքը փլելով միայն ոտքերը մնացած են, եւ մի քանին ալ դեռ եւս կանգուն կը մնան՝ այնքան տարիներէ ի վեր տակաւով տմեն տարի այն հեղեղներուն՝ որ երբեմն տնհաւատալի յորդութեամբ կուգան եւ խիստ սոստիկ հոսելով ուղղաձիգ կերպով կ'իյնան դաշտին վրայ, ուր դամբան դգամ աճելով կը հոսին Գալլ դետին մէջ որ քաղաքէն կէս ժամ հեռի դաշտին մէջէն կ'ընթանայ:

Ինչպէս որ յայտնի կ'երեւայ այն բեկորներէն՝ որք տակաւին ջրին մէջ ծուռ ու մուռ կը կենան, այս քաղաքէն ի Կոմանայ այսինքն հին Թօքաթի ճամբան երթալու համար դետին վրայ կայ եղեր ժամանակին ընդարձակ կամուրջ մը գրեթէ 650 մեթր լայնութեամբ, եւ ահա այս կամրջին դեռեւս կանգուն մնացած կամ կիսակատար ոտքերուն վրայ հիմնեց երկրաջալի Ապրօ Էֆէնտի այն ահագին կամուրջն՝ որ մէկ Սուլթանի անուան շուրջուած է: Ասկէ վար գետին հոտանքին հետեւելով երբ ըլլածանք՝ երկու ժամ լիովին դաշտային ճամբայ մը կըտրենէս յետոյ, դաշտին հասած տեղը պիտի հանդիպինք մեծագործ կամրջի մը, որ թէպէտ 120 մեթր միայն լայն է, սակայն իւր հսկայ շինութեամբը, մանաւանդ հնութեամբը ահաւելի բան մ'է, որու մի ստորին երեսը դրուած է մի մեծ մարմարիոն քար, ուր քանդակուած հին զրեք ալ կան. զըմբազդ արար ջրին յորդութեան պատճառաւ չը կրցայ մօտենալ որ զայն պատկերէի: Այս կամրջէն տնդին գետին տնցը կը նեղնայ եւ երեք ժամ կրճի մը մէջէն կ'ընթանայ ուժով, մինչ ի դաշտն Հէրէկի. այս կրճին երկու կողմերը բարձրաբերձ ժայռեր են, ուր տեղ տեղ ձեռքի պարզ դործիներով փորուած այրեր կ'երեւան, եւ ուր գնալու համար ո՛չ ճամբայ կայ եւ ո՛չ ալ գետին մէջէն վեր ելնելու համար սանդուխներ կ'երեւան. գետն այս կրճին մէջ խիստ խոր է եւ բնաւ մարդ կամ կենդանի չի կրնար անցնիլ, ուստի կարելի է մտածել թէ՛ այս այրերը մահապարտից վայրեր ըլլային տուննօք: Գետը Հէրէկի դաշտն հասնելով իւր ծաւալը կ'ընդարձակէ, եւ համար համար ընթանալով մէկ ժամ յետոյ կը հասնի Հէրէկ անուն գիւղաքաղաքին առջեւ, որն որ Նիքսարի շափ բնակչօք եւ անկէ քիչ մը առա-

ւել վաճառաչաւ, լիովին հարթ քաղաք մ'է ուր բնաւ բարձր տեղ մը չը տեսնուիր, եւ օդն ալ չափէն աւելի վատաւորը է: Այս քաղաքին մէջ բնաւ հնութեան նշաններ չեն տեսնուիր. վերջէն հաստատուած է. իսկ չրջակայ գիւղերու մէջ տեղ տեղ կան հին քարուկիր պատեր՝ որք կիսովին փլատակ եղած են եւ որոց նայելով այն տեղուա՛ք հին տառնները երեւելի քաղաքներ լինիլ կը կարծենք:

Նիքսարի մէջ կայ 650 տուն, որոց 250ը հայ, 350ը թուրք, իսկ մնացեալները յայն են, որք քաղաքէն անջատուած եւ անկէ դուրսէ մի քառորդ ժամ հեռաւորութեամբ Տէրէ-Պազ ըրուած տեղը կը բնակին: Հայերն ու թուրքերն ուրոյն ուրոյն թաղեր շունին, եւ ամէն թաղի մէջ խառն են: Թուրքերն ունին Բիւշտիէի դպրոց մը երկու դաստառներով, իսկ հայք սոգալին դըպրոց մը, որ թէպէտ շատ տարիներէ ի վեր ամուլ մնացած՝ սակայն վերջին երեք տարիներու մէջ սկսած է զարգանալ շնորհիւ Մեծ Միսաք Էֆէնտի Ներսիսեան երկտասարդ դաստառին՝ որ կը դասախօսէ հայերէն, թուարանութիւն, տշխարհագրութիւն, թուրքերէն եւ մարմնամարզութիւն:

Նիքսարի արտահանութիւնքն են ցորեան, գարի, ափսոն, մահլէպ եւ ծխախոտ որուն աղէկ տեսակները կը մշակուին. ընդ ամենը տասը հազար ոսկիի բերք ունի, զորս քանի մը հայ վաճառականներ ժողուելով կը խրկեն ի Կ. Պօլիս, Ալեքսանդրիա եւ այլուր: Լաւ արհեստագործներ չի կան. երկայն ու ծուռ գանակները միայն որք Նէքսար Բէքէպէ անունը կը կրեն, շատ աղէկ կը շինեն եւ չրջակայ քաղաքներ կը խրկեն ուր յարգ կը տրուի ասոնց: Ժողովուրդը մշակ է ընդհանրապէս, և այր ու կին ամսուռն ու դարնան եղանակներուն մէջ դաշտերը կը գտնուին ցանելու, հընձելու կամ քաղելու համար:

Ինչ որ ըսի Նիքսարի համար, կը յարմարի նաեւ Հէրէկի: Այս քաղաքին մէջ կան 150-160 տուն հայեր, որոց մեծ մասը Թօքաթցի եւ Ամասիացի են, որք մօտ տարիներս փոխադրուած են. տաճիկները հայոց կրկնապատիկն են. իսկ յայն չի կայ բուն քաղաքին մէջ: Թուրքերը Բիւշտիէի դպրոց չու-

նին հոս . հայերն ունին դպրոց մը եկեղեցիին պարտիզն մէջ ողորմելի վիճակի մէջ :

Գործաւոր աղքատ զաւան արտերը կ'աշխատին , խկ հողատէր եւ քիչ շատ ունեւոր մարդիկ երբ իրենց ապրուստին բաւելու բաւական բան կ'ընդունին անդատաններէն և ալ ուրիշ բանի հոգ չեն ընէր , մինչեւ երեկոյ խանութներու ու սրճանոցներու առջեւ ընդունայն ժամեր կ'անցունեն իրարու դէմ անբարոյական խօսքեր ընելով իբր կատակ :

Գ . ՄԱԶՄԱՆԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ Ի ՊՈԼԻՍ

Արքունի կալուածներէն Այ-Սթէֆանօսի շրջակայքը գտնուած Այ-Մամա ազարակին մէջ վերջերս փորձեր եղած են նորահնար հնձող մեքենաներով :

Երկար ժամանակէ ի վեր մայրաքաղաքս բնակող Լօթօն և Զիզնէլ անուն երկրագործական անդլիական ընկերութիւնն արտօնութիւն խնդրած էր արքունի կալուածներէն Պոլսոյ չրջակայ ազարակաց միայն մէջ մէկ քանի հնձող մեքենայից գործնական փորձերը կատարել : Կայս . հրամանաւ անձնական Գանձուն նախարար Վսեմ Յաւոր փաշա , ընդունելով անդլիական ընկերութեան առաջարկն , պէտք եղած հրամանները ղրկած էր Այ-Մամա ազարակի տնօրէն Զաքարեան էֆէնտիի որպէս զի հայթայթէ հարկ եղած անասունները , այլ եւ այլ պէտքերն եւ ամեն տեսակ զիւրութիւն ընծայէ :

Արդ , այս փորձերն սկսան կատարուիլ յունիս 12/24 հինգշաբթի օրն և աւարտեցան յուլիս 3ի (Ն . Տ .) շաբաթ օրն :

Փորձի ենթարկուած մեքենայք էին Ուուսի հնարած խուրձ կապող մեքենայն , նոյն հնարագէտին թեթև մանգաղով խուրձ զատող մեքենայն եւ Սամուէլընի հնարած Օրլանթի անուն խուրձ զատող մեքենայն : Ներկայք սքանչացան յիշեալ մեքենայից

շարժման , կտրուածքին եւ հարթ ու ուղիղ խուրձ կապելուն վրայ : Մասնաւոր ուշադրութիւն գրաւեց խուրձ կապով մեքենային կատարեալ շարժումն որ ամենայն կանոնաւորութեամբ կր ժողովէ ցորենն առանց պզտիկ կեղեւ մը թողլու :

Այս մեքենայն նախ ցորենը կը հնձէ եւ յետոյ հնձուածները հինգ կլոր սանտրերու միջոցաւ հորիզոնական մակերեսայթի մը վըրայ կ'յնան , ուստից հորիզոնական ձեւով շարժող կերպաս մը հնձուած ցորեններն ուղղահայեաց կերպով շարժող կերպասի մը կը տանի եւ անտի կ'երթայ խուրձ կապելու տեղը : Հնձուած ցորենն երբ խուրձ կապելու տեղն երթայ , այն ատեն մեքենայն կ'սկսի կատարելագոյն շարժիլ եւ խուրձերը պատրաստելով կապել :

Խուրձերն մինչեւ որ իրենց յատուկ ծաւալը չը գտնեն չեն կանուր եւ երբ որոշեալ խոշորութեան հասնին , իրենց ծանրութեամբ բաւական մը ինքնիրեն վար կ'ընայ եւ այսպէսով խուրձը կը կապուի : Յետոյ կապելու յատուկ շուանը կը կտրուի և կապուած խուրձն անմիջապէս երկու երկփանիններու միջոցաւ մեքենայէն դուրս կը նետուի : Երկփանիններն այս գործողութենէն յետոյ վերստին իրենց տեղերը կը դառնան եւ կը շարունակեն իրենց գործը :

Յունիս 27ին ուրիշ փորձ մ'ալ եղած է ի ներկայութեան Երկրագործական Սենեկի նախագահ Նէճիպ փաշայի եւ Ամասեան էֆէնտիի : Այս առթիւ Նէճիպ փաշա հետեւեալ կարծիքն յայտնած է .

« Ապագային մէջ մեծ դիւրութիւններ պիտի ընծայուին երկրագործութեան , որովհետեւ կառք մը պիտի կարենայ այս կապուած խուրձերն անմիջապէս կալող մեքենայն փոխադրել , որով մի եւ նոյն ատեն թէ՛ հնձման եւ թէ՛ կալի գործողութիւնը կը կատարուի : »

Այս մեքենայն շարժելու համար գործածուած գոմէշի եւ եզի նման դանդաղ կենդանիք թէեւ կը ծանրացնեն շարժումն , այսու հանդերձ կատարուած փորձի ատեն թէեւ նոյն տեսակ անասունք գործածուած են , սակայն մեքենայն դարձեալ պէտք եղած կերպով շարժած եւ բոլոր խուրձերն կատարեալ կերպիւ կապած է :

Այս մեքենայն, զոր կը շարժեն երեք եզ, որոց երկուքը կրնան հանգստանալ երբ մին աշխատի, յիսուս մարդու մէկ օրուան մէջ կատարելիք գործը՝ կը տեսնէ ամենայն կանոնաւորութեամբ:

Պոլսոյ պէս բարեբեր եւ հնձման եղանակին մէջ արեւու պէտք եղած ջերմութիւնըն ունեցող երկրի մը մէջ երկրագործութեամբ զբաղող անձինք գիտեն այն օգուտն որ ձեռք կը բերուի ցորենը ժամանակին հնձելէ:

Նրբ այս մեքենայներն հնարուեցան, ամեն երկրի մէջ շատ մը անխելքներ կարծեցին թէ այլ եւս իրենց գործ մնացած չէ: Հարկ չենք զգար այս կարծիքներու անհիմն լինելն ապացուցանել: Հնձման ժամանակ պէտք եղած գործաւորները չեն դտնուիր և ժամանակն անցնելով ցորենը կը փլասուի, որով այս մեքենայներուն մեծ օգուտն այն ժամանակ կը հասկցուի: Այս մեքենաներու գործածութեամբ մեր երկրագործաց դասն մեծապէս կ'օգտուի և երկրին ցորենի բերքն աւելնալով դուրսէն եկած ցորենի տրուելիք ստակն ուրիշ աւելի կենսական պիտոյից կը գործածուի:

Գործաւորք, Սամուէլսընի հնարած Օմ-նի-ամ անուն հնձող մեքենայն կրնան մինակ գործածել: Այս մեքենայն, որ մէկ քանի տարիէ ի վեր կը գործածուի, միայն խուրձ կապելու համար մէկ քանի գործաւորաց պէտք ունի:

Այ-Մամա ագարակի տնօրէն Զաքարեան էֆէնտի փորձերու յաջողութիւնը տեսնելով գոհ եղած եւ ըստ այնմ տեղեկագրած է Վսեմ Յակոբ փաշայի որ անմիջապէս հրամայած է այդ մեքենայներէն գնել եւ երկուքը նոյն ագարակին մէջ գործածել եւ միւսն ալ Գանտիլիի շրջակայքը գտնուած արքունի ագարակը շրջել:

* * *

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԲ

Թիի	21.	(Մասի Թիւ	3814)
»	35.	»	3828)
»	36.	»	3828)
»	37.	»	3831)

ԽՆԴԻՐ

Թիի 38.

Եղբայր մը կը հարցնէր իւր բոլ թէ քանի՞ կանգուն ժապաւէն գործածած էր շրջագետին համար. — 192 շշի, պատասխանեց քոյրը, բայց կանգունին վրայ 2 զշխաբուեցայ, որովհետեւ բարեկամու հրներէս մին նոյն քնով 8 կանգուն աւելի ժապաւէն առաւ: — Քանի՞ կանգուն ժապաւէն գործածած էր քոյրը:

Թիի 39

Առնենք Ա Օ Բ ուղիղ անկիւն մը և Մ հաստատուն կէտ մը Օ Բ ի վրայ: Գծենք շրջանակ մը (պատկերը շինել) որ շոշափէ զՕ Ա ի Օ: Մ կէտէն գծենք սոյն շրջանակը շոշափող գիծ մը: Փ ըլլայ հպման կէտը: Գծենք Օ Փ, նոյնպէս եւ Օ Բ եւ Մ Փ գծերուն կազմած երկու անկեանց երկատիւներն որք կը կարեն զՕ Փ ի Կ եւ ի Կ': Ապացուցանել թէ Կ և Կ' կէտերուն հեռւերն, մինչդեռ շրջանակը կը փոփոխի, երկու շրջանակներ են:

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՆԳՇԱԲԱԹԵԱՅ ՎՃԱՐՄ. ԲԱԺԱՆՈՐԴԱՅ

Սկսեալ 9 Յունիսէ 1886, մինչեւ 12 Յուլիս

12 Յուլիսէն յետոյ տեղի ունեցած վըճարմունք չեն նշանակուած:

ԲՃԱՐԴ	ՎճԱՐՄ	ԲՃԱՐԴ	ՎճԱՐՄ
Թի-	Ղրշ	Թի-	Ղրշ
1	60	19	40
2	60	20	40
3	60	21	60
4	40	23	60
5	60	24	60
9	40	25	420
12	40	29	20
15	70	30	30
14	60	31	40
16	300	32	60
17	50	34	60
18	70	35	80

ԲՃՆՈՐԴ ԹԻ-	ՎՃԱՐՃՆԻ ՂՐԸ	ԲՃՆՈՐԴ ԹԻ-	ՎՃԱՐՃՆԻ ՂՐԸ
36	80	115	260
37	240	118	40
39	60	119	140
40	20	122	20
42	60	125	40
48	40	124	80
49	60	123	210
50	80	127	60
52	80	128	60
56	70	130	20
64	40	131	110
65	60	132	80
66	60	135	60
67	80	158	120
70	70	141	100
71	40	143	120
72	40	147	210
75	40	153	20
74	70	155	40
75	100	157	60
76	40	161	20
77	60	162	50
79	60	165	140
80	300	165	40
81	40	167	40
82	20	171	40
83	120	177	60
85	50	178	50
86	70	182	20
87	160	183	20
88	110	184	80
91	20	186	60
92	60	187	60
93	40	189	20
94	20	190	50
95	20	192	60
97	160	193	20
98	40	194	50
99	200	195	60
100	120	197	50
102	70	198	20
103	70	201	80
104	80	203	50
105	150	206	60
106	40	207	200
107	40	210	40

ԲՃՆՈՐԴ ԹԻ-	ՎՃԱՐՃՆԻ ՂՐԸ	ԲՃՆՈՐԴ ԹԻ-	ՎՃԱՐՃՆԻ ՂՐԸ
211	80	256	40
218	60	258	20
219	20	259	20
220	80	260	80
221	80	262	20
222	80	263	60
224	60	264	80
225	50	265	20
226	20	266	60
227	20	268	180
228	20	269	40
231	70	270	40
232	50	273	50
233	50	274	170
234	40	276	40
235	70	277	60
236	80	278	40
237	40	279	40
241	40	280	150
244	120	281	500
247	40	282	500
251	40	284	20
252	40	285	40
253	110		
255	40		11,870

14րդէն մինչեւ 19րդը, հինգ շարժը-
ուան մէջ, տասն և մէկ հազար ութ հարիւր
եօթանասուն ղ հաւաքուած է:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆ ԴԱԿ

25 Յուլիս 1886

Վերջին երկու շաբաթներու մէջ յիշա-
տակութեան արժանի կարեւորագոյն լուրն
է Արեւելեան Րումէլիի Կազմական Կանոնա-
դիրը վերաքննելու սալտոն ունեցող յանձ-
նախմբին Օսմանեան պատուիրակաց՝ Վսեմ.
Ապրօ էֆէնիի եւ Մաճիտ փաշայի մեկ-
նումն ի Սօֆիա, Աղեքսանդր Իշխանն եւս

անուանած լինելով իր պատուիրակներ, յանձնաժողովն այս պահուստ ձեռնարկած է իր աշխատութեան որ մեծ հետաքրքրութեամբ կը զիտուի Եւրոպայի Դաշինքներուն կողմէ:

Սոֆիայի Ազգային Ժողովն փակեց իւր նիստեր, կարգ մը օրինական ծրագրեր ընդունելէ եւ Վառնա - Ռուսօքի երկաթուղոյն պուլկար կառավարութեան կողմէ վերագնման համար հարկ եղած վարկը ընդունելէ յետոյ: Սոֆիայի նիստերը թէեւ չափ յուզեալ եղան ամեն անգամ, սակայն չունեցան քաղաքական մեծ նշանակութիւն մը, որպէս կ'սպասուէր ի սկզբան. միայն թէ նախարարապետ Պ. Քարապէտեան յայտարարած է որ եթէ Պուլկարի վրայ սատարի ճնշում բանեցնել ուզուի, Պուլկարի եւ Արեւելեան Բուլղարի վարչութիւններն անջատելու առաջարկին ոյժ տալու համար, Ազգային Ժողովը վերստին ի նիստ պիտի հրաւիրուի երկրին հետեւելի ուղղութիւնը գծելու:

Երբ պուլկարական եւ հելլենական խնդրոյն արդի վիճակին բերմամբ, կայս. կառավարութիւնը մէկ կողմէ կը ցրուէ իւր զօրքեր, միւս կողմէ առ ի գգուելութիւն կ'որոշէ հսկող բանակ մը պահել եւրոպական թուրքի մէջ, Այս բանակ պիտի բաղկանայ մասամբ կայս. եւ զօրաբանակի պահեստի զօրքերէն (իւր 30,000 հոգի) եւ մասամբ Ալբանիի գաւառին պահեստի զօրքերէն (իւր 20,000 հոգի) որք ի գէն պիտի կոչուին: Այս կերպով Բ. Դուռը պատրաստ բանակ մը պիտի ունենայ յԵւրոպական թուրքի, որ պիտի բաւէ ոչ միայն բարեկարգութեան պահպանման, այլ եւ պատրաստ պիտի լինի ո՛ր եւ է պատահականութեան համար զոր յառաջ բերէ Եւրոպայի քաղաքականութեան մէջ անակնկալ փոփոխութիւն մը: Ասոնք չեն միայն զինուորական տեսակէտով եղած տնօրինութիւնք: Շատ աւելի ուշագրաւ է կայս. այն հրաման որոյ համեմատ Բուլղարի իսլամ գաղթականներէն եւս զօրք պիտի առնուի այսուհետեւ, ջնջուելով թուրքո - ռուսական պատերազմէն ի վեր յիշեալ գաղթականաց համար որոշեալ բացառութիւնը: Մի եւ նոյն ժամանակ որոշուած է ջնջել զինուորական ծառայութեան փոխարէն որոշեալ գումար մը վճարելու կամ վիճակն եւնող անձին տեղ ուրիշ մը ցոյց տալու դրութիւնն: Յետ այսորիկ, ամեն իսլամք զինուորական ծառայութեան պիտի ենթարկուին, առանց ո՛ր եւ է փոխարինութեամբ խոյս տալ կարեւոր:

նալու: Այս տրամադրութիւն չը պատկանիր սակայն թուրքի ոչ-մահմետական հը. պատակաց որք ըստ առաջնոյն պիտի շարունակեն պեթլէ-սաթլէ տուրքը վճարել, փոխանակ բանակին ծառայութեան մտնելու:

Իրր ամբողջացումն այս տեղեկութեանց, յիշենք կարեւոր լուր մը զոր կը հրատարակեն Վիեննայի թերթեր, թէ Ղապի Ահմետ Մուսթար փաշա նշանակուած է ի գերագոյն հրամատարութիւն օսմ. զօրաց ի Փոքր Ասիա եւ թէ իւր պաշտօնն գլխաւ պիտի անցնի, Եգիպտոսէ վերագառնալու պէս: Լէվանթ Զեբալ հաստատելով զայս, կ'ըսէ թէ երբ Տօնուքոֆ - Քօրսաքոֆ իշխանը ծանր պատրաստութիւններ կը կատարէ կաւկասիոյ կողմէ, գոհացուցիչ է տեսնել որ թուրքիոյ կողմէ Ղապի Մուսթար փաշայի նման ձեռնհաս զօրավարի մը կը յանձնուի պաշտպանութեան գործը:

Արտաքին քաղաքական լրոց մէջ յիշատակելի զէպն է Պ. Կլաւտոնի նախարարութեան հրաժարումն, Անգլիոյ երեսփոխանական վերջին ընտրութեանց վրայ, եւ պահպանողականաց պետ Լորտ Սարգսսոնի ձեռամբ նոր նախարարութեան մը կազմութիւնն յորում արտաքին գործոց նախարարի պաշտօնն յանձն առած է Լորտ Խոտտէ, որ աւելի ծանօթ է Սըր Ստաֆօրդ Նօրթ-բօք անունն ներքեւ:

* *

Ազգային հրատապ լուրերէ զուրկ էինք վերջին օրերս: Վանայ խնդիրը կը մնայ նոյն վիճակին մէջ յոր թողուցինք երկու շաբաթ առաջ, հաղորդելով Վարչութեան որոշումներն: Խառն ժողովն երէկ նոր նիստ մ'ընելով, այդ տնօրինութեան ի վեր վանէն ի Պատրիարքարան հասած այլ եւ այլ հեռագրերը նկատողութեան առնելով որոշեց. 1⁰. ըստ խնդրանաց Օրմանեան եպիսկոպոսի որ տեղէ կը տառապի ի վտան, արտօնել զն. Գերապատուութիւն ի Կարին, իւր վիճակը վերադառնալու: 2⁰. յանձնարարել Կոռուց անապատի վանահայր Մաթակունի Յովհաննէս վարդապետին որ Վանայ վիճակին մէջ իրեն յանձնուած առժամեայ պաշտօնն ստանձնէ անմիջապէս եւ ի գործ դնէ ցգալուստ Պատր. Գեր. Փոխանորդին:

Տ. Ա.

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻՐԱԳՐՈՅ